'ի Քաղաքն Ս. եւ անդրէն դարձցին 'ի տեղիս իւրեանց և զրովանդակ ծախսն հոգասցեն Հայք և Յոյնք, 'ի 13 Մայիս ամսոյ՝ 1722։

Իսկ Գրիգոր Պատրիարք աջակցութեամբ Հաննա վարդապետի ընդարձակեաց զաւանդատունն Ս. Ստեփաննոսի, կառուցեալն 'ի ժամանակս Թագաւորացն Կիլիկիոյ, շինեալ 'ի նմա սեղան Պատարագի յանուն Ս. Լուսաւորչին, եւ զԱւազանն Ս. առընթեր նմին՝ յօրինեալ վայելուչ և ոպիտակ մարմարիոն քարամբք։ Կանգնեաց սեղան 'ի բարձր ամպիոնն 'ի կողմն հիւսիսոյ՝ յանուն Ս. Նշանի, և շինեաց 'ի վերայ սեղանոյն պահարան գեղեցիկ յոր պահէին զՍ. Խաչն, որ ունէր մասն 'ի կենաց Փայտին։ Գնեաց յայլազգեաց զբազում տունս՝ և խառնեաց զնոսա 'ի վանս, և պարսպեաց զնա շուրջանակի բարձր և ամուր պարսպաւ 'ի զգուշութիւն գողոց և աւազակաց. շինեաց զբազմաթիւ սենեակս 'ի պէտս բնակութեան ուխտաւորաց և միաբանաց. արար և զցորենատունն՝ յորում եղեալ կայ խաչ մարմարիոն բերեալ յեկեղեցւոյ Յովակիմայ և Աննայի. Նորոգեաց Նաեւ զվանս Բեթղեհէմի՝ ընդարձակեալ սենեակս և զխուցս 'ի նմա, և զեկեղեցին հանդերձ ոսկեզօծ խաչկալօք, ժողովեալ անդ բարեկրօն միանձունս և աղօթաւորս կրօնաւորական կարգօք՝ կալ 'ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ, և աղօթս առնել վասն ամենայն աշխարհի և օրհնեալ աղգիս Հայոց։

Յետ այնորիկ ձեռնարկեալ Նորոգեաց զվանս Յոսպէի՝ կառուցեալ 'ի նմա հաստատուն քարամբք կամարս 8, և ընդարձակեաց զիջեւանս ուխտաւորաց և տեառնագրեաց զեկեղեցի յանուն Ս. Նիկողայոսի Հայրապետին՝ պաշտպանին նաւավարաց. զկալուածսն՝ էր զոր գնեաց նոր 'ի նորոյ, և էր զոր 'ի գրաւէ թափեաց, որոյ ձեռնտու և օգնական էր յամենայնի նա ինքն Հաննա վարդապետ իւրով անխոնջ աշխատութեամբ։ Այս ամենայն արձանագրեալ կայր 'ի վերայ դրան հոգեւոր Յոսպէի վանաց 'ի թուին Հայոց 1174 (1725), զոր անզգոյշք ոմանք բարձին զայն անտի։ Նորոգեաց և զվանս Ս. Հրեշտակապետի՝ ծեփեալ ոպիտակացոյց զեկեղեցին, եւ ընդարձակեաց զաւանդատունն. կանգնեալ 'ի նմա Սեղան Պատարագի յանուն